№ 89 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 10 **1891** ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 10 № 89

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զրպարտութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Սղնախից. Նամակ Խմբագրին. Նեղքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հիմա ու առաջ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դարձեալ տեղակալութեան առիթով.

## ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսի „Արևելք“ լրագիրը, որը մի ժամանակ բաւական յարգված թերթ էր, այժմ ընկնելով այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք արհամարհված են թէ Թիֆլիսում, և թէ Կ. Պոլսում, կատաբեալ լրբութեան է հասել, բարդելով շատերի վրա անասելի զրպարտութիւններ: Եւ այդ բոլորը դրա համար, որ առաջ տանեն իրանց կաթողիկոսական թեկնածուները ու մի և նոյն ժամանակ ցեխ գցեն Երեմիա և Արիստակէս սրբազանների երեսին: Հասկանալի է թէ ո՞վքեր են Երեմիայի և Արիստակէսի, որպէս երկու ազնիւ անձանց թշնամիները՝ թէ Թիֆլիսում, թէ Կ. Պոլսում և թէ Էջմիածնում:

„Արևելքում“ տպված յօդուածները, ինչպէս լրագիրն ինքն ասում է, գրված են Ռուսաստանում, կամ աւելի լաւ է ասել՝ Անդրկովկասում,—Թիֆլիսում և Էջմիածնում.... Ուրեմն հասկանալի է թէ ո՞վքեր են այդ լրբոր գրողները և ինչ բանին են ձգտում:

Լսեցէք. „Հէնց առաջին օրվանից տեղակալ սրբազանն իր գոյնը ցոյց տուեց. նա հակառակ օրինաց թոյլ տուեց որ պրօկուրորը իր կնիքն էլ դնէ վեհարանի դռներին, քանի որ օրէնքով միայն սինոդի կնքով է կնքվում վեհարանը:“

Սուտ է. բոլոր կաթողիկոսների մահից յետոյ վեհարանը կնքվում էր թէ սինոդի և թէ պրօկուրորի կնքով: Ի՞նչի առաջ չէին բողոքում սինոդականները....

Այնուհետև կարդում ենք. „Երբ որ Սուքիաս սրբազանը յայտնեց սինոդին վեհափառի գոյքի գողանալու մասին և մատնանիշ արեց Հաջի-Յակոբի վրա, տեղակալ սրբազանն իր ստորագրութեամբ գաղտնի թղթեր գրեց քննիչին և մեղադրանքներ չանաց հաստատել Սուքիաս և Ներսէս սրբազանների վրա, թէ դոքա գողակից են Յակոբին, որ ոչնչով չը կարողացաւ հաստատել, և միայն հեռացրեց իրանից իր անդամակիցներին:“

Կատաբեալ զրպարտութիւն. ի հարկէ, երբ բացվեց Յակոբի գողութիւնը և Սուքիաս ստիպվեց այդ մասին զրաւոր յայտարարութիւն տալ, չը կարողանալով այդ բանում դիմադրել տեղակալի հրամանին կամ խորհրդին, այն ժամանակ տեղակալը պարտաւոր էր գողութեան մասին իմաց տալ քննիչին: Բայց ամենազզուելի զրպարտութիւն է անում յօդուածագիրը հաւատացնելով որ տեղակալը մատնել ուզեց Սուքիասին և Ներսէսին: Ընդհակառակն, նրանց մատնեց քննիչին ձերբակալված Յակոբը, որը մի քանի օր առաջ նոյն եպիսկոպոսների հետ մի և նոյն սեղանի մօտ ճաշի էր նստում: Եւ երբ Երևանի նահանգական դատարանի պրօկուրոր պ. Ժուկովսկի այդ ցուցմունքների մասին տեղեկանալով անձամբ ներկայացաւ Երեմիա սրբազանին, թոյլատրութիւն խնդրելով խուզարկել Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսների բնակարանները,—տեղակալը համաձայնութիւն չը տուեց պ. պրօկուրորին:

Ապա „Արևելք“ լրագիրը հաւատացնում է որ Էջմիածնում հրատարակվող „Արարատ“ լրագիրը, որը նախկին կաթողիկոսների ժամանակ առանց ցենզուրա, իրան կաթողիկոսի պատասխանատուութեամբ էր հրատարակվում, այժմ, շնորհով Երեմիա սրբազանի արած քայլերի՝ ենթարկված է կառավարչական ցենզուրային:

Դա կրկին մի անամօթ սուտ է: Երբ կաթողիկոսի մահից յետոյ տպարանը կառավարող եպիսկոպոսը ուզեց իր անձնական պատասխանատուութեամբ դուրս բերել „Արարատի“ տեսարակը,—տեղակալը չը թոյլ տուեց: Իսկ երբ դուրս բերեցին տեսարակը, լի սինոդի խարդախված օրագրութիւններով,—տեղակալը հրամայեց կարել տեսարակից մի քանի երեսներ: Իսկ կառավարութիւնը վերաբերվում է տեղակալին այնպէս, ինչպէս կաթողիկոսի փոխանորդին. այդ է պատճառը, որ կառավարչապետը մի պաշտօնական թղթով առաջարկեց տեղակալին որ ինքն յանձն առնէ „Արարատի“ գրաքննութիւնը, ինչպէս յանձն առած էին նոյն գրաքննութիւնը հանգուցեալ Գէորգ և Մակար կաթողիկոսները: Դա ամենալաւ ապացոյց է որ կառավարութիւնը Երեմիային կաթողիկոսական տեղակալ է համարում որ խնդրում է նրան ստանձնել այնպիսի ֆունկցիաներ, որ վարում էր միմիայն կաթողիկոսը: Դա ամենալաւ ապացոյց է որ կառավարութիւնն էլ ընդունում է որ տեղակալը ունի կաթողիկոսի բոլոր եկեղեցական-վարչական իրաւունքները, միայն չունի նրա զուտ կրօնական իրաւունքները:

Նոյն յօդուածում կարդում ենք որ Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսը տեղակալի խորհրդատու լինելով, այդ երկու անձնաւորութիւնները վախենալով „այստեղի կեղտերը դուրս տանելուց„ ամեն կերպ աշխատեցան Պետրոս Սիմէօնեանցին ամառը Էջմիածնից գնալուն արգելք լինել և երբ սինոդը նրան արձակուրդ տուեց, տեղակալը յայտնեց որ Սիմէօնեանցին այլ ևս պաշտօնեայ չէ ճանաչում և զրկեց նրան ամառվայ ռոճկից....

Գոնէ այդ գրողները իրանք հասկանային, թէ ինչ են գրում: Մինչև Մակարի մահը Էջմիածնի գործերը կառավարում էր այն կուսակցութիւնը, որին պատկանում էր և ինքն Սիմէօնեանց. ուրեմն եթէ „այստեղ“, այսինքն Էջմիածնում կան դիզված կեղտերը,—դրանք նախկին վարիչների կեղտերն են: Ուրեմն Երեմիան և Սեդրակեանը ոչինչ վախենալու չէին կարող ունենալ, եթէ այդ կեղտերը հրապարակ հանէր Պետրոս Սիմէօնեան: Բայց բանը դրանումն է, որ Սիմէօնեանցի պէս մարդը իր և իր կուսակիցների հրէշաւոր կեղտերը հրապարակ չէր հանի, այլ կը սկսէր զրպարտել իր հակառակորդներին այնպէս, ինչպէս „Արևելքի“ յօդուածն է զրպարտում իր հակառակորդներին, կամ այն կուսակցութեան ներկայացուցիչներին, որոնցից յոյս չունի դրամական օժանդակութիւն ստանալու:

„Արևելքի“ նոյն յօդուածի ճնացած ստերն ու զրպարտութիւններն այն ասաֆան հրէշաւոր, զզուելի և գայրոյթ պատճառող են,—որ մենք անյարմար ենք համարում յիշել մեր լրագրի մէջ,

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Օգոստոսի 3-ին

Յունիս ամսի վերջերին Սղնախ այցելեց թեմական առաջնորդ՝ սրբազան Մամբրէ եպիսկոպոսը: Եկեղեցում արտասանած քարոզի մէջ՝ սրբազանն ուրախութիւն յայտնեց, որ ինքը վերջապէս կարողացաւ տեսնել Սղնախը, կարողացաւ այցելել իր հօտը: Սրբազանը կարճ, բայց հասկանալի ոճով՝ բացատրեց թէ ո՛րքան մեծ նշանակութիւն ունի մի այդպիսի հեռու անկիւնում գտնվող հայ հասարակութեան համար՝ սէրը, համերաշխութիւնը և եղբայրսիրութիւնը:

Նորին սրբազնութիւնը մօտ 10 օր մնաց Սղնախում, եկեղեցական և ուսումնարանական գործերը կարգի բերելով: Եւ եթէ այս աշխատութիւնը չը լինէր, գուցէ դեռ մինչև այժմս էլ ուսուցիչները ամառվայ ռոճիկ ստացած չը լինէին: Անցեալ տարվայ ուսուցչական խումբը արմատական կերպով փոխվեց: Հասարակութիւնը թող ուրախանայ և թող սպասէ երջանիկ ապագայի. մարդ չէ կարող չը ցաւել մի հասարակութեան վրա, որն այդքան ինքնախաբէութեամբ ուրանում է իր մէջ գործողների անկեղծ և անձնուրաց աշխատանքը: Մեր հասարակութիւնը իր մանուկների երէկվայ կրթող-դաստիարակողներին՝ այսօր պատրաստ է ցեխի հետ հաւասարել: Ինչ և իցէ

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԱՐՁԵԱԼ ՏԵՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Տեղապահութիւնը անհրաժեշտ էր, որովհետև մէկ կաթողիկոսի մահից մինչև միւսի ընտրութիւնը բաւական ժամանակ էր մէջ անցնում, մանաւանդ թէ երկար երկար տարիներ էին սահում, երբ երկրի քաղաքական կացութիւնը խառնուած, տակնուվրա էր պատահում, կամ մի արտաքին բռնաւորի կամք գործի չուտափոյթ կատարվելը չէր ցանկանում: Արդ, որպէս զի այդ ժամանակամիջոցը անտիրութեամբ ու անգլխութեամբ չանցնի, մեր եկեղեցում ընդունված էր տեղապահութիւնը, բայց առանց կօնդակի կամ ձեռնադրութեան, և օրինաւոր էր: Մեր եկեղեցու ընդունած և նուիրագործած այդ սովորութիւնը, արդասիք հարկի և անհրաժեշտութեան, օրինաւոր էր և իրաւական և ազգի ընդհանրութիւնից վաւեր ճանաչված: Տեղապահութիւնը գուցէ անհրաժեշտ չէր լինի, և կաթողիկոսի ու կաթողիկոսարանի գործերն էլ կարող էին օդում կախ մնալ, որից ամենևին չէ խրտնում «Արձագանք» աստուածաբանը, եթէ միջոց ժամանակը կարճ լինէր, օրինակ՝ մի շաբթական: Բայց տարու կամ տարիների համար ինչ ասենք: Հռովմայ պապի ընտրութիւնը, հաշուելով նախորդ պապի մահվան օրից, ութ օրվայ մէջ պիտի կատարվէր. եթէ conclave-ը—կարդինալների ժողով կամ ընտրող սենեակը այդ պայմանաժամում չը վերջացնէր ընտրութիւնը, ցամաք հացով ու ջրով կը պատժվէր: Կարդինալները միաժողով գտնվում են Հռօմում և պատրաստ են ընտրութիւնը մի շաբթում կատարելու, ուստի պապական տեղապահի հարկ չը կայ, թէև դարձեալ այդ ութ օրվայ իշխանը կայ, որ գոնէ ցամաք հացով ու ջրով պատժէր անճիշդ կարդինալներին: Բայց մեր նախարարները, եպիսկոպոսները, վարդապետները, քահանաները, ժողովուրդը իրանց հազարաւոր ներկայացուցիչներով քանի՞ օրում կը հաւաքէիր ընտրութիւն անելու՝ խաղաղութեան միջոցին, և քանի՞ տարում՝ եթէ խաղաղութիւնը վրդովված էր: Արդ, մինչև ընտրութիւնը՝ եկեղեցական աւագներից մէկը հարկաւ պիտի տեղապահէր: Եւ տեղապահում էր, առանց կօնդակի և ձեռնադրութեան. պաշտօնը աւարտելուց, կաթողիկոս ընտրել տալուց զկնի՝ օրհնում էր նա ժողովականներին և նորընտիր հայրապետին, ինքն էլ առնում էր հայրապետի և նրանց օրհնութիւնը.—«օրհնեալ լինէր ի Հայրապետէն, և բաղում երախտիս և շնորհակալութիւն ընկալ յամենեցունց. զի զայնքան անցելոց ամացն առանց Առաջնորդի ոչինչ թեթև և թերի թողեալ զտեղապահութիւն իւր, այլ լի և կատարեալ դատիւ և դատաստանաւ առնել իրաւունս և գործել զարդարութիւն յամենայն ժամ. և դարձեալ խընդրել իրաւունս և փրկել զրկեալսն, դատ առնել որբոյն և տալ իրաւունս այրոյն ըստ մարգարէին. և դարձեալ զորբս և զայրիս ընդունել, և զճանապարհս ամբարշտաց կորուսանել ըստ մարգարէին» (Ուխտանէս Եպիսկոպոս, պատմ. հայոց, 1871, ի տպարանի սբբոյ կաթողիկէ Էջմիածնի):

Մեծ և շքեղ էր կաթողիկոսական տունը, կաթողիկոսարանը, իր պերճութեան օրերում, երբ ցնծութիւնն էր այնտեղ. վսեմ էր և պատկառելի կաթողիկոսական տունը իր տրամութեան օրերում: Տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ, վաթսուն աբեղայ, հինգ հարիւր աշխարհական, հարիւրներով գիւղեր, կալուածներ, բազմաթիւ զարդեր զարդարանքներ, թագաւորների և հայրապետների թանգագին ընծաներ, Տրդատեան զգեստներ, ոսկեգրիչ հայրերի անգնահատելի մատեաններ, կահեր, սպասներ և վեհափառ պերճութեան ամենայն սարք ու կարգ և «էր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն հայոց», ահա կաթողիկոսական տան փառքը, մարմնի աչքը պարարող ու շլացնող, միտքը գրաւող, սիրտը բարձրացնող. այդ ժամանակ կաթողիկոսական տունը ցնծում էր, իր սրբավայրերի և սրբութիւնների միջում, թագաւորական բազմաժողով քաղաքի մէջ: Փոխվում է սակայն տեսարանը. սուրբ աթոռը իր հաստատութիւնից դրդված, խախտված, ընկած է տարուբերք զանազան և անպատշաճ տեղեր՝ այլազգիների երկիրզի և հարկի տակ, ազգայիններից անօգնական և աննուէր թողված: Մի լռանիստ ժայռի վրա, մի նսեմ քարանձաւի մէջ նստած է թագնաբար, որպէս վնասապարտ մէկը մի մեծ հոգի, մի ծով միտք, որի մէջ երկինքը իր բարձրութեամբ և անդունդը իր խորութեամբ երերվում են, մեր հայրապետների լոյսն ու շնորհը Ներսէս, այդ թախծալից մեծ Պահլաւը, այծեամնի պէս օրսորդներից ու շներից փախստական եղած, այն քարանձաւն ապաւինած, զուրկ՝ ինչպէս ինքն է գրում՝ մարմնական հարկաւոր պիտոյքներից, ոչ գիւղ ունենալով և ոչ ագարակ, և ոչ անգամ մի օրավար տեղ, որ գոնէ իր մատնեցոյցով աշխատէր՝ իր պէտքը լցնելու: Սակայն սուրբը դարձեալ իր սրբարանումն էր և նրանցից էր ողջոյն տալիս իր վշտաբեկ հօտին. «Ողջոյն սիրոյ և խաղաղութեան՝ հասցէ յԱստուածընկալ և փրկական սրբոյ նշանէս, և ի հրեղէն լեզուաց հոգւոյն ընդունողաց Առաքելական նշխարացս, և ի սուրբ լուսաւորչին մերոյ յաջէս և յաթոռոյս»:

Հայրապետի անցմանից յետ մինչև յաջորդի երևելը ով պիտի պահէր պահպանէր այս սրբութիւններն ու գանձեր, այն պերճութիւնն ու պերճանքներ. ով պիտի պահէր պահպանէր կապը կեդրոնավայրի հետ, ուր սուրբ նշանն էր ու սուրբ աջը, աթոռն ու Հայրապետի գաւազանը. ով պիտի արծարծէր սէրը, լուցանէր հուրը, անքակ պահպանէր ուխտը, յանձանձէր կարօտութիւնը, մխիթարէր վիշտը, դատ անէր որբին ու այրուն:

Տեղապահը, տէր աստուածաբան, և տեղապահը առանց կօնդակի և ձեռնադրութեան: Հայրապետի ընտրութիւնից յետ տեղապահը բերում էր և համարով ու համրանքով յանձնում նրան Աստուծոյ փրկական ու կենսակիր նշանը, սուրբ առաքեալների նշխարները, լուսաւորչի աջը, ապա աթոռը, գաւազանը, սրբութեան բոլոր սպասները՝ սկիհ, զգեստ, վարագոյր, խնկանոց, բուրվառ, քշոց, կաթողիկոսի մետաքսեայ վակաս—կազմեալ յականց՝ և յոսկոյ՝ և ի մարգարտէ,—քահանաների և սարկաւագների զգենլիք և արկանելիք, բեհեզ, ծիրանի, եղրածիրանի և միջնածիրանի և այլ գունակ գունակ՝ և երփն երփն՝ և երանգ երանգ ծաղկազարդ ու պայծառ պատմուճաններ և այլն, և այլն, և այլն. յետոյ բերում էր «բաղում գրեան զանազան և ազգի ազգի եկեղեցական և վարդապետական, և այլ մարմնա-

Սղնախի հայերը յայտնի են իրանց անտարբերութիւնով, իրանց հակահասարակական և հակապետական բոլոր առաքինութիւններով:

Շոքը սաստիկ է այստեղ. ժողովրդի մէջ տիրում է կատարեալ մեռելութիւն, մտաւոր, բարոյական և ֆիզիկական մեռելութիւն: Ամառ ժամանակ շատ անհետաքրքիր և ձանձրալի է այստեղի կեանքը. զանազանակերպութիւններ չը կան, զուարճութեան և նուրբ հոգեկան բաւականութիւնների ոչ մի միջոց չը կայ, բացի գեղեցիկ բնութիւնից: Բայց այդ գեղեցիկ բնութիւնից օգտվում են միայն շատ քչերը: Սուրբ Կարապետի տօնը շատ աղմկալի կերպով կատարեցին, այժմ սղնախեցիք պատրաստվում են «Նասումխար» կոչված վանքի տօնախմբութիւնը կատարել: Այդպիսի տօների համար շատ դիւրագրգիռ է տեղիս հասարակութիւնը, որովհետև յարմար առիթ կայ քէֆ անելու, գինի կոնծելու:

***

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 օգոստոսի

Ձեր թերթի 85-րդ համարում կարդացի մի սխալ լուր, որը շտապում եմ հերքելու: Անծանօթ լրատուն ասում է, որ մի պարոն (անունը չէ յայտնում) Խան-քենդու եղեղեցու օգտին հաւաքել է 550 ռուբլի, բայց դեռ չէ ներկայացրել նոյն եկեղեցու հոգաբարձութեանը: Այդ պարոնը ես եմ, և հոգաբարձութեան ուղարկված մատեանը գտնվում է ինձ մօտ: Եկեղեցու օգտին ժողովել եմ 155 ռուբլի և ոչ 550 ռուբլի:

Հոգաբարձութեանը յայտնած եմ, որ պէս-պէս հանգամանքներից ստիպված չը կարողացայ աւել ժողովել և որովհետև շատերը խոստացան առաջիկայ աշնան ստորագրվել և իրանց նուէրները տալ, ուստի և յայտնած եմ, որ մատեանը կը մնայ ինձ մօտ մինչև սեպտեմբերի վերջը: Այնուհետև կը ստանան թէ մատեանը և թէ նրա միջոցով ժողված դրամները կանոնաւոր հաշուի հետ միասին:

Արշակ Թումանեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տեղական ռուս լրագիրներին հաղորդում են հաստատ աղբիւրներից, որ ճիշդ չէ այն լուրը, թէ Կովկասեան սարերի վրա պատահած սարսափելի հեղեղի ժամանակ մի պօստային կառք իր ճանապարհորդներով կորած լինէր:

—

«Русское Обозрѣніе» ամսագրի յուլիսի տետրակում տպված է Սօլովիեվի յօդուածը «Русское Искусство въ 1890—91 году» (Ռուսաց գեղարուեստը 1890—91 թուերին) վերնագրով: Ռուս նկարիչների մասին խօսելով, յօդուածագիրը յիշում է նմանապէս և Գ. Բաշինջաղեանի նկարները: Նա ասում է որ երիտասարդ նկարչի մի քանի արդիւնաբերութիւնները, որտեղ նկարիչը ներկայացրել է լումնի չողքերի ջրի մէջ արտափայլումը, գերազանցում են Լագորիոյի և Այվազովսկու այդ ձևի նկարչութիւններից: Բայց յօդուածագիրը զգուշացնում է Բաշինջաղեանին, որ այդ նկարչութիւնների ձևը վտանգաւոր է. մարդը կարող է դրա վրա իր տաղանդը սպառել, ինչպէս սպառեց իր տաղանդը այդ տեսակ էֆէկտների ետևից ընկնելով, յայտնի ռուս նկարիչ Կուինջի: Մենք կը համարձակվենք նկատել պ. Սօլովիեվին, որ Բաշինջաղեանի նկարչութեան ձևը Կուինջիի նկարչութիւնների պէս միակողմանի չէ:

—

ԿՕԶՕՐԻՑ մեզ գրում են, որ օգոստոսի 6-ին կայացաւ այդտեղի բոտանդում մանկական ներկայացում: Այդ տեսակ ներկայացումները շատ կրթիչ են մանուկների համար, երբ կազմված են մանկական հասակին մատչելի պրոգրամով: Սակայն նոյնը չենք կարող ասել օգոստոսի 6-ի ներկայացման մասին. նախ ռուսաց ժողովրդական կեանքից վերցրած տեսարանները անհասկանալի էին մեր կովկասեան մանուկներին, ապա պ. Դունին-Բարկովսկու երգած կուպլէտները «խելագարի յիշողութիւններից» և խելագարի դէմքով, ոչ թէ միայն զարգացուցիչ չեն կարող համարվել, այլ նոյն իսկ վնասակար են մանուկների համար, անախորժ և սարսափելի տպաւորութիւն գործելով մանուկների երևակայութեան վրա: Զարմանում ենք թէ պարոնը, ինքն մանկավարժ լինելով, այդ ճշմարտութիւնը չէ ըմբռնել: Ուրիշ կողմից «Բաքոսի հանդիսաւոր գնացքը» հին յունական հագուստներով՝ սաստիկ զուարճացրեց դահլիճում հաւաքված բազմաթիւ մանուկներին և ուրախութիւն պատճառեց նոյն իսկ հասակաւորներին: Բոտանդում ասեղ գցելու տեղ չը կար:

—

ԴՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի առևտուրն ընկած դրութեան մէջ է. առձեռն դրամ, առ ու ծախ բոլորովին չը կայ: Այնուամենայնիւ բաւական ապրանք է բերվում Ռուսաստանից: Այս տարի մեր գաւառի բերքն էլ շատ սակաւ է, մանաւանդ հացահատիկները: Անցեալ տարի ցորենի առաջին տեսակը ծախվում էր 50—52 կոպէկի, իսկ այժմ գինը բարձրացել է 70—75 կոպէկի, այն էլ աւելի վատ ցորեն է: Խնձորը, որն ամեն տարի մեծ քանակութեամբ էր արտահանվում դէպի Ռուսաստան, այս տարի սովորական քանակութեան տասներորդ մասն էլ չի դոյանայ: Մի խօսքով Դուբան կորցրել է իր վաղեմի հարստութիւնը:»

—

Մեզ հաղորդում են ԴՈՒԲԱՅԻՑ և հետևեալը. «Անցեալ ամսի 26-ին տեղս եկաւ Բաղուի քարոզիչ Կիւրեղ վարդապետը և սկսեց այստեղ քարոզել: Դուբայեցիները համակրութեամբ են վերաբերվում դէպի վարդապետը և նրա քարոզներին բազմաթիւ ունկնդիրներ են ներկայ գտնվում: Ցանկալի կը լինէր որ վարդապետը մի քանի շաբաթ էլ մնար մեզ մօտ:»

—

Կ. Պոլսից մեզ ուղարկված է հետևեալ աղդը տպագրելու համար: «Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց, կը հրաւիրվեն այն հեղինակներն, որք ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ որ և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան, իրանց աշխատութիւններն յուղարկել մինչև ներկայ տարոյս դեկտեմբեր ամսոյ վերջն, առ ամենապատիւ սրբազան Պատրիարք հայրն, ի Պոլիս: Տպագրեալ աշխատութիւնքն պէտք է, որ երեք օրինակ յուղարկվին, իսկ ձեռագիր՝ մի օրինակ, որք ետ չեն դարձվիր:»

—

Սեպտեմբեր ամիսը մօտենում է և մենք յիշեցնում ենք մեր բաժանորդներից շատերին, որ ժամանակ է արդէն վճարել խմբագրութեանը «Մշակի» թէ այս տարվայ և թէ անցեալ տարվայ բաժանորդագինը:

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ աշխատանքները Կովկասեան սարերի վրա հեղեղից վնասված ճանապարհները վերականգնեցնելու նպատակով՝ շատ դանդաղ և անաջող են առաջ գնում: Պակաս են աշխատաւոր ձեռքերը. բանուորները պահանջում են 2 ռուբլուց աւելի օրավարձ: Միտք կար պարտաւորեցնել շինական ժողովուրդը բանել ճանապարհների վրա, սակայն երկրիս կառավարչապետ, գեներալ Շերեմետեվ, Կիսլովոդսկից տեղեկացրել է, որ ինքն հաւանութիւն չէ տալիս այդ տեսակ կարգադրութեան, որովհետև շինական ազգաբնակութիւնը զբաղված է այժմ, հունձի ժամանակ, դաշտային աշխատանքներով և անկարելի է նրան ստիպել թողնել իր աշխատանքները ու պարտաւորեցնել՝ փչացած ճանապարհի վրա բանելու:

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Վարդավառի տօնին սովորաբար մեծ բազմութեամբ ուխտաւորներ էին գալիս այստեղ, Ս. Թադէոս և Վարոս կրօնաւորների գերեզմանները համբուրելու: Այդտեղ լինում էին զանազան, նոյն իսկ հեռաւոր քաղաքներից եկած հայեր: Իսկ այս տարի ոչ ոք չը գնաց այդ ուխտատեղին: Այդ ուխտատեղին, որը կրում է Վարդիհէր անունը, ունի առհասարակ մեծ արդիւնք, սակայն այդ արդիւնքը տարուց տարի ոչ թէ միայն նուազում է, այլ և իսպառ ոչնչանում, կորչում է: Արդեօք հոգևոր բարձր իշխանութեան գործը չէ՞ քննել և իմանալ՝ ուր է կորչում արդիւնքը:»

—

Վերջապէս երէկ, օգոստոսի 9-ին պօստ ստացվեց Թիֆլիսում:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԻՄԱ ՈՒ ԱՌԱՋ

—

Մօտ երկու ամիս է «Արևելքի» մէջ կը հրատարակուին Ս. Էջմիածնի մասին շարք մը խրատ. բազրականներ, լուրեր և թղթակցութիւններ որք սրտի ցաւ կը պատճառեն մասնաւորապէս ինձ: Այդ բոլոր հրատարակութիւնք իմ կարծիքով «Արևելքի» անցեալին հերքումը կը նկատուին: Կարելի չէ որ այդ հերքումը ընդունիմ: Թէպէտև «Արևելքէ» բաժնուած եմ, բայց չեմ կրնար թշնամի ըլլալ թերթի մը որուն հիմնադիրներէն եմ, որուն վարչութեան անդամ եղած եմ շարունակ վեց տարի, և որուն զարգացմանն համար իմ այն ժամանակի ընկերակիցներուս հետ չեմ խնայած ձեռքէս եկած ո և է աշխատանք. և ինչպէս ընկերներս նոյն և ես նիւթական ո և է փոքրիկ փոխարինութիւն մը չենք ստացած մեր աշխատութեանց համար:

«Արևելք» ունի անցեալ մը զոր պէտք չէ մոռնան այդ թերթի այժմու վարիչներն, որք գրեթէ անոնք են որոնք որ էին մեր ժամանակը:

Էջմիածնի վերաբերեալ հարցերու մէջ «Արևելքի» հրատարակած լուրերն, թղթակցութիւններն այնպիսի աղբիւրներէ են որք ի սկզբանէ անտի «Արևելքի» մէջ նկատուած էին իբր ոչ անկողմնակալ աղբիւրներ: Այն խմբակ, անոր պարագլուխներն՝ որք այժմ գրաւած են «Արևելքի» վստահութիւնն, և այն թերթ որուն համար «Արևելքի» մէջ երկիւղած ջանքեր սկսած է ըլլալ զայն ներկայացնելու համար իբր անձնուրութեան ու անշահախնդրութեան թերթը՝ ամենքը ամենքը «Արևելքի» և անոր վարչութեան բոլոր անդամներուն թշնամիներն եղած են, ինչ սորին թշնամիներ, ինչ պժգալի ոխերիներ:

Այն թերթ, որուն անունը ներելի չէր «Արարատ» կրօնաւորներուն գերեզմանները համբուրելու: Այդտեղ լինում էին զանազան, նոյն իսկ հեռաւոր քաղաքներից եկած հայեր: Իսկ այս տարի ոչ ոք չը գնաց այդ ուխտատեղին: Այդ ուխտատեղին, որը կրում է Վարդիհէր անունը, ունի առհասարակ մեծ արդիւնք, սակայն այդ արդիւնքը տարուց տարի ոչ թէ միայն նուազում է, այլ և իսպառ ոչնչանում, կորչում է: Արդեօք հոգևոր բարձր իշխանութեան գործը չէ՞ քննել և իմանալ՝ ուր է կորչում արդիւնքը:»

—

Վերջապէս երէկ, օգոստոսի 9-ին պօստ ստացվեց Թիֆլիսում:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԻՄԱ ՈՒ ԱՌԱՋ

—

Մօտ երկու ամիս է «Արևելքի» մէջ կը հրատարակուին Ս. Էջմիածնի մասին շարք մը խրատ. բազրականներ, լուրեր և թղթակցութիւններ որք սրտի ցաւ կը պատճառեն մասնաւորապէս ինձ: Այդ բոլոր հրատարակութիւնք իմ կարծիքով «Արևելքի» անցեալին հերքումը կը նկատուին: Կարելի չէ որ այդ հերքումը ընդունիմ: Թէպէտև «Արևելքէ» բաժնուած եմ, բայց չեմ կրնար թշնամի ըլլալ թերթի մը որուն հիմնադիրներէն եմ, որուն վարչութեան անդամ եղած եմ շարունակ վեց տարի, և որուն զարգացմանն համար իմ այն ժամանակի ընկերակիցներուս հետ չեմ խնայած ձեռքէս եկած ո և է աշխատանք. և ինչպէս ընկերներս նոյն և ես նիւթական ո և է փոքրիկ փոխարինութիւն մը չենք ստացած մեր աշխատութեանց համար:

«Արևելք» ունի անցեալ մը զոր պէտք չէ մոռնան այդ թերթի այժմու վարիչներն, որք գրեթէ անոնք են որոնք որ էին մեր ժամանակը:

Էջմիածնի վերաբերեալ հարցերու մէջ «Արևելքի» հրատարակած լուրերն, թղթակցութիւններն այնպիսի աղբիւրներէ են որք ի սկզբանէ անտի «Արևելքի» մէջ նկատուած էին իբր ոչ անկողմնակալ աղբիւրներ: Այն խմբակ, անոր պարագլուխներն՝ որք այժմ գրաւած են «Արևելքի» վստահութիւնն, և այն թերթ որուն համար «Արևելքի» մէջ երկիւղած ջանքեր սկսած է ըլլալ զայն ներկայացնելու համար իբր անձնուրութեան ու անշահախնդրութեան թերթը՝ ամենքը ամենքը «Արևելքի» և անոր վարչութեան բոլոր անդամներուն թշնամիներն եղած են, ինչ սորին թշնամիներ, ինչ պժգալի ոխերիներ:

Այն թերթ, որուն անունը ներելի չէր «Արարատ»

---

ւոր իրք գոյիւ չափ (ինչքան որ կար) բերեալ գրով առաջի կացուցանէր, և օրհնեալ լինէր ի Հայրապետէն»: Փակակալ, Աւանդատան, Աւագ լուսարար՝ դրանք ևս տեղապահութեան հետ պատահող պաշտօնական պատուանուններ էին, որոնց իրական նշանակութիւնը բաւական բացատրվում է նախընթաց տողերով:

Այդպիսի էին աթոռի տեղապահի պաշտօնները. և այդ պաշտօնները կատարել կարողանալու համար կօնդակը կանոն կամ անհրաժեշտ բան չէ եղել, իսկ ձեռնադրութիւնը, այդ գիտէ միայն «Արձագանքի» դաղանի խորհուրդը:

Կօնդակը կանոն կամ անհրաժեշտ բան չէ եղել մեր եկեղեցում տեղապահութեան իրաւունքի համար, որպէս զի տեղապահութիւնը անխափան տեղի ունենար. ապա թէ ոչ կարող էր պատահել, որպէս և պատահած իսկ է, և մի օրինակն էլ դեռ երէկ, որ կաթողիկոսը յանկարծուստ մեռնում է առանց տեղապահութեան համար կօնդակ թողնելու: Այս դէպքում ինչ պիտի անէինք, եթէ կօնդակի կանոնը լինէր: Կամ պէտք է կաթողիկոսին վերաբերեալ գործերը մի կծիկ անէինք ու անշարժ օդում կախ տայինք, կացէք՝ ասէինք, ինչպէս Նաւէի որդի Յեսուն ասաց արեգակին, մինչև մենք նոր կաթողիկոս ընտրենք. կամ թէ չէ, մենք, ձեռաց, մի եօթ ութ օրվայ մէջ, պէտք է ընտրէինք.... Ի՞նչ. չը գիտեմ ինչ, տեղապահ թէ կաթողիկոս: Բայց մեր հայրերը իրանց բանը իմացել են: Երբ կաթողիկոսը մեռել է, տեղապահը երևացել և ընդունվել է: Նա եղել է կաթողիկոսարանի մի աւագ եպիսկոպոս կամ մի ականաւոր վարդապետ, եղել է փակակալ եպիսկոպոսը, Էջմիածնի եպիսկոպոսը: Եւ այդ եղողը վարչական սայլը չէ կանգնեցրել, այլ յառաջ է վարել ի դիմաց կաթողիկոսի. արել է այն ամենը, ինչ որ վերևներում յիշեցինք: Մեռօն չէ օրհնել, եպիսկոպոս չէ ձեռնադրել. բայց մեռօն բաշխել է, նշխար ընդունել է՝ որ ընդունում է կաթողիկոսը պատարագիչ եպիսկոպոսներից և վարդապետներից. կարևոր թղթեր է գրել, հաւատոյ խնդիրներում անդամ, կարևոր անձինքների. օրինակ այսպիսի վերնագրութեամբ—«Սրբասիրի Տեառն Կիւրոնի Վրաց կաթողիկոսի, Ներսէհի և Վահանայ և Բղամի իշխանաց, ի Վրթանիսէ և ի միաբան պաշտոնէից սրբոյ եկեղեցւոյս՝ Տէրամբ ողջոյն:» Շրջաբերական է գրում, այս օրինակ վերնագրով—«Սրբասէր ուղղափառաց և ճշմարտից ամենայն վանաց Երիցանց և գեղջաց Քահանայից, աղատաց և չինականաց, ծերոց և տղայոց, հայաբերու աշխարհաց, և համօրէն ամենայն ժողովրդականաց, որ էք ընդ իշխանութեամբ եկեղեցւոյդ Յուրատաւայ, ի Վրթանիսէ և յայլ պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյս՝ Տէրամբ ողջոյն»: Ժողով է գումարում, օրինակ՝ Մանազկերտում, և ժողովով պատուիրում է իր հօտին «անփոփոխ պահպանել նախնական աւանդութիւնքն, ինչպէս են՝ հաղորդութեան խորհուրդն (անջրախառն և անխմոր), ծննդեան և յայտնութեան տօնի կատարման ժամանակը (6 յունվարի) և պահոց հայկական առանձին սովորութիւններն» (Մուրատեանց, պատմ. եկեղեց.):

Այդպէս հայկական եկեղեցին ունեցել է տեղականներ, գահի թափուր միջոցին, եկեղեցին վարելու իշխանութեամբ՝ սուրբ եկեղեցու միաբան պաշտօնեաների գործակցութեամբ, առանց այդ պաշտօնավարութեան համակարգութիւնը կամ կարողութիւնը նոր ձեռնադրութեամբ ստանալու. զի այս դէպքում, այսինքն ձեռնադրվելու պայմանում, որ անչուշտ եպիսկոպոսները պիտի անէին, նա արդէն կաթողիկոս կը դառնար, միայն առանց ազգի միաժողով ընտրութեան, այլ, ներեցէք օրինակիս, մի ընտրող սենեակի, մի conclave-ի, հայ կարդինալների ընտրութեամբ: Իսկ նշանակելով կամ, որ նոյն է, կոնդակով իշխանութիւն տալը, ուր ազգի հաւանութիւնը, վկայութիւնը մասն չունենայն, այդ՝ հայ եկեղեցու մէջ սովորութիւն և օրէնք չէ եղել: Քահանայութեան ներքեւի աստիճանից մինչև նրա գագաթնայինը մեր մէջ ընտրութեամբ և հաւանութեամբ է եղել: Մէկի կամքը, թէկն հայրապետ լինէր նա, մեր եկեղեցու մէջ օրէնք չէ եղել: Եւ երբ նա մի այդպիսի կամք է ունեցել եկեղեցու օգտի համար, նախ պատշաճաւոր հաւանութիւն է խնդրել ազգի ներկայացուցիչ ժողովից և դարձեալ սրա ընտրութեամբ է արել այդ գործը: Թագաւորների բռնութիւնը մինչև անգամ իր ընտրելիի համար այդ ժողովի հաւանութիւնը խլելով ձեռք է բերել: Օրինակներ, երբ թագաւորներ և հայրապետներ արտայայտել են իրանց կամքը՝ բայց ժողովի ընդունելութեամբ միայն օրինականացրել են այդ կամքը, մեր պատմութեան էջերում պակաս չեն: Ժողով, ժողովուրդ, ընտրութիւն, հաւանութիւն, ահա մեր պատմութեան մեզ ցոյց տուած աղբիւրները, որից բղխել են օրէնք, կարգ, իշխանութիւն, սահման և որ սոցին սակի:

Նշանակութիւն, կօնդակ նշանակութեան, կամ իշխանատուութեան, դա անհատական կամքի և կամքի այլ և այլ տրամադրութիւնների գործ է, ուր ընդհանուրի դատաստանը, հաւանութիւնը, վկայութիւնը կարող են ամենևին հաշուի չառնուիլ: Իշխանութիւն տուող այդպիսի աղբիւրներից հայոց եկեղեցին զզոյշ է կացել և հեռու է մնացել:

Եթէ կօնդակը նուիրական է և իշխանութիւն զգեցնող՝ հաւասար ձեռնադրութեան, որպէս ճշնում է ընդունելի կացնել «Արձագանքի» իշխան եկեղեցագէտը, և մի sine qua non պայման է ներկայացնում, ապա ուրեմն նա անյեսոկոչելի է, նամանաւանդ նա անյեսոկոչելի է այդ դէպքում, երբ նրա տուող բարձր իրաւասուն ա ևս կենդանների թւում չէ և նրա հաւասար ա հատն էլ դեռ չը կայ: Արդ եթէ ազգը, ազգի ս սը, հէնց ասենք մինչև իսկ սինոդական հայրդ դժգոհ լինեն այդ կօնդակաւորից, ինչ պէտք է նենք: Ազգային եկեղեցական ժողով գումարենք բարձր իրաւասութեամբ այդ կօնդակը չեղ ցնելու համար:

Վերջապէս, եթէ կօնդակը «Արձագանքի» եկեղեցական իրաւագէտի հաւատոյքներից մէկն է և եկեղեցական նուիրապետութեան մէջ իշխանութեան sine qna non պայմանն է, ուրեմն իշխան եկեղեցագէտը իր մեծ արձագանքով նզովում է մեր անկոնդակ տեղակալած եպիսկոպոսներին ու վարդապետներին և սրանց էլ անկօնդակ թողած ու մեռած կաթողիկոսներին:

Եթէ կօնդակը անհրաժեշտ էր, ամենայն մի կաթողիկոսի պարտքն էր առանց կօնդակով տեղակալ նշանակելու չը թողնել հեռանալ այս աշխարհից և մեզ անիշխանութեան մատնել: Նրանք լաւ գիտենալով, որ մահը յանկարծ՝ գողի պէս կարող է վրա հասնել, պարտաւոր էին տեղակալի կօնդակը միշտ նախահոգութեամբ իրանց ծոցում պատրաստ ունենալ:

Վայ ձեզ դպրաց փարիսեցոյ կեղծաւորաց, որ տասանորդէք դանանուխ և զսամիթ և զդամման: Վայ որ զմժդուկս քամէք և զուղտս կլանէք:

Այսր կօնդակներն էլ կարող են զոզացուիլ. ինչ կասէք:

Ա. Մ. Եղեկեան

ելքի» մէջ գրել իսկ, և այդ թերթի արբանեակները ութը տարիէ ի վեր աշխատած են արատաւորել «Արևելքն» ու անոր վարչութեան անդամներն, և անոր հիմնադիրներն։

Ինձ գրուածներուն համար հոգ չէի ըներ բնաւ. ես սորված եմ, և ամէն ոք գիտէ թէ հրապարակագրի մը համար թշնամութիւն և բարեկամութիւն չեն պակսիր, սակայն ընկերներս այնպէս չէին։ Հրապարակագիր չէին, բայց ունէին նպատակ մը որ ամենուս նպատակն էր, ուղղամտութեամբ աշխատիլ, ուղղամիտ թերթ հրատարակել, և «Արևելք» իր զարգացումը գլխաւորապէս պարտական է այդ ուղղամտութեան համբաւին։ Արդ՝ այդ երիտասարդները նողկանք կը զգային տեսնելով թէ՝ իրենց ուղղամտութիւնը որպիսի զրպարտանաց կենթարկուի ի Կովկաս։ Պ. Կարապետ Սըվաճեանի դէմ այնպիսի զրպարտութիւններ տեղացին այդ թերթն ու իր համախոհք, որ մինչև իսկ այդ պարոնի բարեկամ չեղողներն ալ զզուանքով կարդացին այդ ստորին զրպարտութիւններ։ Հոչակեցին «Արևելքը» կաշառակեր, ազգավաճառ, օտարին ծախուած։ Պ. Սըվաճեանի հետ ամէն տեսակ հալածանաց ենթակայ եղաւ Պ. Յարութիւն Ներսիսեան, «Արևելքի» Վարչական խորհուրդի արդի Ատենապետը։

«Արևելքի» ու անոր վարիչներու դէմ եղած ատելութիւնը եթէ առժամանակեայ ըլլար, դուցէ ըսուէր թէ այդ զրպարտիչներն ալ մարդ են, կրնան սխալիլ. բայց ոչ, այնպէս չեղաւ։ Այդ ատելութիւն կը շարունակէ մինչև վերջին ամիսներս։

Իսկ կար թերթ մը որ «Արևելքը» քննադատելով հանդերձ, բարձր կը պահէր անոր պատիւը, կը յայտարարէր ընթերցողներին թէ՝ Տաճկաստանի հայք երբէք չեն ունեցած «Արևելքի» նման օրագիր մը, որ պատիւ կրնայ բերել նոյն իսկ եւրոպացւոց։

Հիմա կը հարցնեմ. երբ «Արևելքի» մէջ ջանքեր կըլլան ուղղամիտ ու եկեղեցասէր հոչակելու այնպիսիներ, որք զրպարտիչ ոսկերիմներն եղան «Արևելքին» ու անոր վարիչներուն, արդեօք այս ջանքով «Արևելք» մեղայ ըսած չըլլար։ Արդեօք «Արևելք» ասով ընդունած չըլլար թէ՝ այդ թերթն ու իրենները իրաւունք ունէին ինչ որ կըսէին իրեն դէմ։

Այս կէտին այսքան։ Անցնինք ուրիշ կէտի մը։

Սինոդի և զանազան եպիսկոպոսաց նկատմամբ «Արևելքի» մէջ կը հրատարակուին էջմիածնէն թղթակցութիւններ ու տեղեկութիւններ, որք միշտ ծամածուռ ճամբայներով կը ջանան արատաւորել կաթողիկոսական տեղապահն ու Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսը։ Այդ տեղեկութեանց աղբիւրներն են «Արևելքի» հին ատելիները։ Անոնց տուած տեղեկութիւններու դէմ դրձեալ «Արևելքի» դիմեմ։

Եթէ Սեդրակեան եպիսկոպոս Տաճկաստանի մէջ լաւ, բարի համբաւ մը ստացաւ, «Արևելքի» ինորհիւն է։ «Արևելք» ութը տարի ներկայացուց այդ եկեղեցականը ճիշդ այնպէս ինչպէս որ է՝ ազնիւ, մաքուր, տաղանդաւոր, անձնուէր եկեղեցականներ, ուղղամիտ ու պատուոյ տէր խմբագիրներ, ասոնք յանկարծ մէկ բոլորի մէջ, առանց նախապատրաստութեան կը հոչակուին ասոնց բոլորովին հակառակը։

Մինթէ կարելի է, որ ժողովուրդն այլ ևս վրատահի օրագիրներու ըսածին։ Օրագիրներն այն օրը կը կորսնցնեն իրենց ոյժը, երբ հասարակութիւն ըսէ, «օրագիրն այսօր անանկ կըսէ, բայց նայինք վաղը ինչ պիտի ըսէ. այսօր կը գովէ, վաղը վեր չը պիտի առնէ»։

Օրագիր մը իր դատաստաններն այն ատեն պիտի փոխէ, իր տուած վճիռն այն ատեն պիտի ջնջէ երբ անհերքելի ապացոյցներ կան անձի մը, իրողութեան մը ընդդէմ կամ ի նպաստ։

Մենք չենք փափագիր երբէք, որ «Արևելք» իր ստացած համբաւէն բան մը կորսնցնէ։ Օրագրութեան մէջ համերաշխութիւն մը կայ որ պէտք է անեղծ մնայ։ «Արևելքի» համար բարոյական կորուստ մը, մեծ կորուստ մըն է նաև ընդհանուր հայ մամուլին և մասնաւորապէս «Հայրենիքի» համար. ժողովուրդը մեծարեց «Արևելքը», եթէ այսօր ժողովուրդը իր կարծիքը փոխէ «Արևելքի» մասին, հարուածը մեզ ալ կը հասնի։ Թերահաւատութիւնը համաճարակ ախտ մըն է. երբ ժողովուրդը թերհաւատի իր մէկ սիրած թերթին, ալ դժուարաւ կը սկսի հաւատալ ուրիշ թերթերուն, «կը սպասենք, նայինք ինչ պիտի ըլլայ» կ'ըսէ։

Այս ամենը կը յիշեցնեմ «Արևելքի» իմ բարեկամներուս, որոնց հետ այնքան տարի փոխադարձ վստահութեամբ ապրեցանք։ Հիմա պարագայները զմեզ իրարմէ բաժնեցին, բայց անցեալը մեր մէջ կապ մըն է։

«Արևելք» ունի անցեալ մը, որուն պէտք է հաւատարիմ մնայ, զի այդ անցեալն «Արևելքի» ոյժն է։ «Արևելք» եթէ հաւատարիմ չը մընայ այդ անցեալին, կը տկարանայ։

(Հայրենիք)

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից մասնաւոր նամակով մեզ հաղորդում են, որ քաղաքական հորիզոնը շատ մռայլ է. սպասվում է փոթորիկ։ Այդ քաղաքական փոթորիկը կարող է տեղի ունենալ Բոսֆորի ջրերում։ Միջերկրական ծովի անգլիական նաւատորմը ուժեղացրած է 10 հատ զրահակիր նաւերով և ուրիշ աւելի փոքր զինուորական նաւերով։

—Բերլինից մասնաւոր նամակով մեզ հաղորդում են հետևեալը. «Կոխի մեթոդը տուբերկուլոզը բժշկելու կատարելագոյն մերժվեց։ Այս օրերս Երևելի պրոֆէսոր Լէյդրն մի դասախօսութիւն կարդաց այդ բժշկական մեթոդի մասին, որը կարող է համարվել Կոխի բժշկական մեթոդի մասին մի փառաւոր դամբանական ճառ։ Լէյդրնի դասախօսութիւնը ահագին տպաւորութիւն գործեց ունկնդիրների վրա։»

—Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ Բաղդադում ծանր խռովութիւններ են ծագել։

—Կ. Պոլսից լրագիրներին հեռագրում են, որ Լօնդոնի թիւրքաց դեսպան, Բուստէմ-փաշան, որը արձակուրդ վերցնելով Ֆրանսիա էր գնացել, այս օրերս յետ կանչվեց Լօնդոն, որպէս զի խորհրդակցի անգլիական արտաքին գործերի մինիստրութեան հետ եգիպտական գործերի վերաբերմամբ։

—Պարսկաստանից հեռագրում են. «Կայսերական ընկերութիւնը ծխախոտի բէժիի յայտարարութիւններ էր կպցրել Թավրիզի փողոցներում. սակայն միւս օրը այդ բոլոր յայտարարութիւնները պատերից գՀլվեցան և նրանց փոխարէն անյայտ ձեռքերը կպցրին նոյն տեղերի վրա յեղափոխական պրոկլամացիաներ, որոնց մէջ ժողովուրդը յորդորում է հոգևորականներին օգնել իրան՝ թէ վերոյիշեալ ընկերութեան և թէ ընկերութեանն օգնող կառավարութեան դէմ մաքառելու։ Թավրիզում բազմաթիւ ձերբակալութիւններ են տեղի ունեցել։»

—Մարկիզ Սոլսբրի իր նորերս արտասանած ճառի մէջ խօսեց Եգիպտոսի և Բոլգարիայի մասին։ Եգիպտոսը, ասեց ազնիւ լորդը, մեծ առաջադիմութիւն է արել և դրանով պարտական է իր իշխանին, որը կրօնի ազատութեան կողմնակից է ու լուսաւորութեան ջերմ կուսակից։ Աւելի էլ մեծ առաջադիմութիւն է արել, կարճ միջոցում, Բոլգարիան։ Երկրի վարիչները ընդունակ յայտնվեցան առաջնորդել ժողովուրդը, իսկ ինքն ժողովուրդն էլ ցոյց տուեց իրան ամենաջերմ կողմնակից քաղաքակրթութեան և առաջադիմութեան, կարճ միջոցում այնպիսի հակայական քայլեր անելով դէպի առաջ, որ ուրիշ ազգերը միայն դարերի ընթացքում են կարողանում անել։ Մարկիզ Սոլսբրի արևելեան խնդրի լուծումը ըստ պատում է Եգիպտոսից և Բոլգարիայից։

—Ստամբուլով մի նամակ է գրել լորդ Սոլսբրիին, շնորհակալութիւն յայտնելով նրան այն համակրական խօսքերի համար, որ Անգլիայի առաջին մինիստրը արտասանել է Բոլգարիայի վերաբերմամբ իր արած ատենաբանութեան մէջ։

—Ֆրանսիայում այս օրերս հրատարակած վիճակագրական տեղեկութիւններից երկրի դպրոցական գործի մասին՝ երևում է, որ ֆրանսիական ժողովրդի միջին դասակարգը դեռ ևս այն աստիճան մոլեռանդ կաթոլիկ ոգով է խմորված, որ իր զաւակներին ուղարկում է մեծ մասամբ ոչ թէ աշխարհական դպրոցներ, այլ հոգևորականների տնօրինութեան տակ գտնվող վարժարանները։

—Իշխան Բիսմարկ յայտնել է իր մի բարեկամին գրած նամակում, որ եթէ ինքն այս բոպէիս շարունակէր Գերմանիայի պետական գործերի ղեկավար լինել, Կրօնշտատի հանդէսը և Ռուսաստանի ու Ֆրանսիայի բարեկամութիւնը տեղի չէր ունենայ։ Բիսմարկ մեղադրում է Վիլհելմ կայսրին, որ սա չխմացաւ այնպիսի ուղղութիւն տալ քաղաքական գործերին՝ որ արգելք լիներ Ռուսաստանի ու Ֆրանսիայի մէջ բարեկամական կապերի հաստատվելուն։

—Ֆրանսիական նաւատորմը Կրօնշտատից ուղևորվեց Անգլիա։ Պորտսմութ քաղաքում ֆրանսիական նաւատորմը փառաւոր կերպով կընդունվի։ Հանդէսին ներկայ կը լինեն՝ Վիկտորիա թագուհին, Էդինբուրգեան իշխանը և ֆրանսիական դեսպան Վադինգտոն։ Լորդ Սոլսբրի հանդէսին ներկայ գտնվելու չէ։

—Հռոմից հեռագրում են, որ Ումբերտոս թագաւորը շուտով կերթայ նայելու ֆրանսիական սահմանի վրա եղած ամրութիւնները։

—Բերլինից հեռագրում են լրագիրներին, որ բժիշկները խորհուրդ են տալիս գերմանական կայսրին երկարատև հանգստութիւն, և այդ պատճառով կայսրը կը հրաժարվի օգոստոսի 10-ին նշանակված զօրահանդէսին ներկայ լինելուց։

—Լօնդոնից լրագիրներին հեռագրում են հետևեալը. «Այստեղ ստացված տեղեկութիւններին համեմատ, չինաց կայսրը հրամայեց խստիւ պատժել եւրոպացիների դէմ անկարգութիւններ գործողներին և առանձին յանձնաժողով նշանակեց գործը քննելու համար։

—Վիէննայից հեռագրում են, թէ այնտեղ ստացված են տեղեկութիւններ, որ Անգլիան զօրեղացնում է իր նաւատորմը Միջերկրական ծովում։

—Լօնդոնի քաղաքական շրջաններում հաւատացնում են, որ իբր թէ Կոբուրգեան Ֆերդինանդ պրինցը շատ յուսահատվել է Ֆրանց-Յովսէփ կայսրի հետ տեսակցելուց յետոյ։ Կայսրը կտրական կերպով յայտնել է պրինցին, որ պէտք է դեռ սպասել և չէ կարելի այժմ Բոլգարիան անկախ պետութիւն հրատարակել։ Գերմանիան, Իտալիան և, ի հարկէ, Թիւրքիան նոյնպէս հեռագրով հաղորդեցին, որ իրանք ևս համաձայն են Ֆրանց-Յովսէփի կայսրի հետ։ Այդ պետութիւններից և ոչ մէկը չէ ցանկանում Բոլգարիայի պատճառով եւրոպական պատերազմ յարուցանել։ Ռուսաստանն ևս տեղեկացրեց Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին, որ եթէ այդ դաշնագիրը կը խախտվի, ինքն էլ այն ժամանակ օգուտ կը քաղի բոլգարական իշխանութեան վրա Սան-Ստէֆանեան դաշնագրով իրան տուած իրաւունքներից։

—Գերմանիայից ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ Բերլինում շատ անհանգիստ են Բավարիայի պարտիկուլիարիատական շարժմամբ։ Այդ շարժմանը դիմադրելու համար Վիլհելմ կայսրը շուտով Միւնխէն կերթայ, բավարական զօրքի մեծ զօրահանդէսներին ներկայ լինելու պատրուակով։ Իրանք հիւսիսային-գերմանական լրագիրները չեն ծածկում, որ Բավարիայում և Վիւրտէմբէրգում հասարակական կարծիքը թշնամաբար է տրամադրված դէպի գերմանական կայսրութիւնը։ Այդ լրագիրներից շատերը հաւատացնում են, որ հարաւային Գերմանիայի ազգաբնակութիւնը (երևի և Սաքսոնիայի) թշնամական զգացմունքներ է տածում դէպի Պրուսիան։ Բավարական մամուլի համարեա բոլոր տարածված օրգանները հակապրուսական ուղղութիւն ունեն և մտքերի տրամադրութիւնը Բավարիայում յիշեցնում է 1866 թուին այնտեղ տիրապետող դրութիւնը։ Բանը այնտեղ հասաւ, որ երբ յայտնի եղաւ, թէ գերմանական կայսրը մտադրութիւն ունի Միւնխէն գալ, այնտեղի մամուլի նշանաւոր մասը այն միտքը սկսեց քարոզել թէ չէ հարկաւոր կայսրին հանդիսաւոր կերպով դիմաւորել։ Մամուլի այդ կարծիքը այնպիսի ազդեցութիւն ունեցաւ Միւնխէնի քաղաքային դումայի վրա, որ այդ վերջինը մեծ դժուարութեամբ և երկար տատանումից յետոյ միայն կարողացաւ որոշել կայսրին դիմաւորելու համար անհրաժեշտ դումարը։

—«Koeln. Zeitung» լրագրի տեղեկութիւններին համեմատ, Վիլհելմ կայսրը երկու շաբաթ կը մնայ Կիլում։ Կայսրի եղբայրը, պրինց Հենրիխ, հաստատ կիլ։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամենանոր և դեռ ևս շատ անճիշդ տեղեկութիւնների հիման վրա, քրիստոնեաների թիւը երկրագնդիս վրա հասնում է 398,000,000 հոգու, որոնցից կաթոլիկներն են 211 միլիոն, բողոքականները—106 միլիոն, ուղղափառները—81 միլիոն։ Ուրիշ կրօններ դաւանողները աւելի շատ են. դրանց մէջ մահմետականները 201 միլիոն են, բուդդայական կրօնին հետևողները 340 միլիոն են, բրամինները—170 միլիոն և հրէաները—7 միլիոն։ Եւրոպայի մէջ 147 միլիոն կաթոլիկներ կան, 72 միլիոն բողոքականներ և 69 միլիոն ուղղափառներ։

* * *

«Астрах. Вѣстникъ» լրագրին յայտնում են, որ Աստրախանի նահանգի դաւառներում մորեխով են կերակրում ձիաներին, որոնք մեծ ախորժակով են ուտում մորեխը և չաղանում են։

* * *

Ներկայումս Եւրոպայում ճանապարհորդում է պարսից Շահի լիազօր դեսպանը, որը յանձնարարութիւն ունի Շահի այցելած բոլոր պալատներին մատուցանել շահնշահի «Ճանապարհորդական տպաւորութիւններ» անունը կրող գրքի մի մի օրինակը։

* * *

Մի քահանայ Ֆիլադէլֆիայում նորերս բեմից յայտնեց, որ ամարային ամիսներին դիտաւորութիւն ունի կրկնապատկել իր գործունէութիւնը և քարոզներն աւելի երկար խօսել։ Քահանայի այդ յայտարարութիւնից յետոյ, մի ամէրիկական լրագրի խօսքերով, նրա ծխականները մի խոշոր գումար հաւաքեցին և առաջարկեցին իրանց քահանային ամարային զբօսանք կատարել Եւրոպայում հանգստանալու համար։

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի։ Երէկ, եկեղեցական հանդիսից յետոյ, Կրասնօսէլեան մեծ վրանում նախաճաշիկ էր պատրաստված, որին ներկայ էին թագաւոր Կայսրը և այն անձինք, որոնք աւստրիական չքանշաններ և ժապաւէններ ունեն։ Թագաւոր Կայսրը խմեց աւստրիական կայսրի կենացը, որի ժամանակ նուագեցին աւստրիական ազգային օրհներգը։—Նոցա Կայսերական Մեծութիւնները օգոստափառ երեխաներով երէկ Կրասնօե-Սելօից անցան Պետերհոֆ։ Կայարանում թագաժառանգ Յէսարեվիչին աղ ու հաց մատուցեց քաղաքային պատգամաւորութիւնը։—Լրագիրները հաղորդում են, որ շուտով կը կայանայ որոշում՝ ամէն տեղ նուիրաւորութիւններ հաւաքելու յօգուտ անպտղաբերութիւնից վնասված ազգաբնակութեան, և որ շատ վանքեր պատրաստվում են իրանց կարողութեան չափ օգնութիւն հասցնել։

ՊԱՐԻԶ, 7 օգոստոսի։ Ի նկատի առնելով այժմեան գործերի դրութիւնը Չինաստանում և պէկինեան կառավարութեան թշնամութիւնը, Պէկինի դիպլոմատիական շրջանները անհրաժեշտ են համարում, որ եւրոպական պետութիւնները իրանց մէջ համաձայնութիւն կայացնեն աւելի հաստատ ճնշում գործելու վերաբերմամբ։

ԲԵՐԼԻՆ, 7 օգոստոսի։ Այսօր կայսերական բանկը կարդադրեց հացահատիկի համար փոխառութիւն տալ մինչև նրա արժողութեան $^2/_3$-ը։ Տրանզիտային պահեստներում գտնվող հացահատիկների համար տրվող փոխառութեան չափը նոյնպէս մեծացրած է։—«Hamburger Correspondent» Բերլինից հաղորդում է, որ զօրքը կերակրելու համար մտադրութիւն կայ նոյնպէս և ցորեն գործածել և Գերմանիան անկախ դարձնել արտասահմանեան ներմուծումից։ Որպէս այժմ վատ պտղաբերութեան պատճառով հաճարի արտահանութիւնը արգելվեցաւ, ճիշդ նոյնպէս վերջում նոյնանման միջոցը կարող է ընդունվել քաղաքական պատճառներով։ Անհրաժեշտ է այդպիսի պատճառների առաջն առնել։ «Norddeutsche Allgemeine Zeltung» լրագիրը, նոյն միտքը յայտնելով, մատնացոյց է անում հացի առևտրի բէֆորմի անհրաժեշտութեան վրա, հացի տեղափոխութիւնը հեշտացնելու համար։

ԿՕԶԼՕՎ, 8 օգոստոսի։ Հաճարի իւրաքանչիւր չէտվէրտը ծախվում է 11¹/₄ ռուբլուց մինչև 11¹/₂ ռուբլի։

ԽԱՐԿՕՎ, 8 օգոստոսի։ Ցորենի և հաճարի գները հաստատվեցան մինչև 1 ռ. 30 կոպ. պուդը։

ՍԱՐԱՏՕՎ, 8 օգոստոսի։ Հաճարը արժէ 1 ռ. 24 կոպէկից մինչև 1 ռ. 26 կոպէկ, թեթև կշռող նոր վարսակի պուդը արժէ 70-ից մինչև 72 կ. կորեկի մի տոպրակն արժէ ¹/₂ ռուբլուց մինչև 8 ռուբլի։

ՕԴԷՍԱ, 8 օգոստոսի։ Պատրաստի հաճարի գինը, որը չարաթ օր 1 ռ. 55 կոպէկի էր հասել, երէկվանից սկսեց ընկնել. այսօր պուդին 1 ռ. 36 կոպէկից աւելի չեն տալիս. ցորենի պուդը 6 կոպէկով էժանացաւ։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 8 օգոստոսի։ Ֆրանսիական նաւատորմը անցաւ Սպիտգէդ ցերեկվայ 4 ժամին. անգլիական և ֆրանսիական նաւատորմերը բարևեցին միմեանց փոխադարձ թնդանօթաձգութեամբ։ Եղանակը լաւ է. նաւակայարանը ծածկված էր հաղարաւոր հանդիսականներով լի նաւերով, որոնք հիացմամբ ողջունում էին նաւատորմը։ Ամեն աչխատանք արված է, որ այստեղի ընդունելութիւնը աչքի ընկնող նշանակութիւն ստանայ. ի նշան առանձին յարգանքի, ֆրանսիական ծովազնացներին կը թոյլատրվի ոչ միայն տեսնել կառուցվող նաւերը, այլ և տեսնել հրազէնների պահեստները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի։ Արտասահմանեան լուրերի առիթով, իբր թէ ամեն տեսակ հացերի արտահանութիւնը դէպի արտասահման արգելված կը լինի, պաշտօնապէս յայտարարվում է, որ ոչ այդպիսի արգելք կը լինի, ոչ էլ արտահանական մաքսահարկ կը որոշվի, որովհետև կայսրութեան աղգաբնակութիւնը բաւական ապահովված կը լինի եղած միջոցներով։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 8 օգոստոսի։ Ծախված է Ղզլարի կարմիր և սպիտակ գինին վեդրոն 2¹/₂ մինչև 3 ռուբլով. չթեղէնի գինը ¹/₄ կոպէկով պակասեց. բամաղէյի գինը 1 կոպէկով։

ՊԱՐԻԶ, 8 օգոստոսի։ Չինաստանից ստացված պաշտօնական հաղորդութիւններին համեմատ, օտար պետութիւնների համագումար ճնշումը սկսում է ներգործել. չինական տեղական իշխանութիւնները աւելի խաղաղասէր տրամադրութիւն են ցոյց տալիս։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 7-ին

| | | |
|---|---|---|
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ | 96 ռ. | 80 կ. |
| Բերլինի վրա 100 մարկ — | 47 » | 40 » |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — | 37 » | 90 » |
| Ոսկի — — արժէ | 7 » | 75 » |
| Մաքսային կուպոններ — | 154 » | 25 » |
| Արծաթ — — — | 1 » | 11 » |
| Բորսային դիսկոնտներ — | 3³/₄ » | 5% » |
| Պետ. բանկի 5% տոմս 1 հրջանի | 103 » | 50 » |
| — — — — 2-րդ — | 103 » | 37 » |
| — — — — 3-րդ — | — » | — » |
| — — — — 4-րդ — | — » | — » |
| — — — — 5-րդ — | — » | — » |
| — — — — 6-րդ — | 102 » | 75 » |
| 6% ոսկեայ րէնտա | 160 » | 50 » |
| 4% ոսկեայ փոխառութիւն | — » | — » |
| Արևելեան 5% փոխառ. 1-ին հրջ. | — » | — » |
| — — — — 2-րդ — | 102 » | 25 » |
| — — — — 3-րդ — | 102 » | 62 » |
| Ներքին 5% առաջին փոխառութ. | 237 » | — » |
| — — երկրորդ — | 227 » | — » |
| Պետական. երկաթուղային րէնտա | 104 » | 37 » |
| 5¹/₂% ռենտա | — » | — » |
| 4% ներքին փոխառութիւն | 97 » | 37 » |
| 5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի | 103 » | — » |
| Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — | 211 » | — » |
| 5¹/₂% վկայակ. գիւղ. հող. բանկի. | 104 » | — » |
| 4¹/₂% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. | 147 » | 25 » |
| — — — թղթադ. | 102 » | 50 » |
| Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. | 102 » | 25 » |
| Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. | 102 » | — » |
| Օդեսայի — — | 102 » | 25 » |
| Թիֆլիսի — — | — » | — » |
| Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. | — » | — » |
| — — Քութայիսի — — | — » | — » |

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Բացված է բաժանորդագրութիւն ազգային կարևորագոյն և ընտիր գրքուկի մը, որ անհրաժեշտ է ո և է հայ մանկուց և անհատի. այս է։

# ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՒԵԼԵԱԼ ԵՒ ՃՈՒԱՅՑԵԱԼ ԵՒ ԶԱՐԴԱՐԵԱԼ ԸՆՏԻՐ ՊԱՏԿԵՐՕՔ

Գրքոյկս կը բաղկանայ մօտ 16 մեծադիր թերթերէ. տպագրութիւնը նորաձոյլ տառերով և ընտիր թղթի վրա է. 27 նոր, գեղեցիկ և նուրբ փորագրութեամբ պատկերներ՝ կը զարդարեն գրքուկիս էջերը, որք կը յիշեցնեն և կը զարթուցանեն հայ մանկուց սրտից և երակաց մէջ ազգութեան ոգին և եռանդը, և կը յորդորեն զիրենք նմանիլ իրենց Հարց։

Բաժանորդագրութեան գինն է 4 ֆրանկ՝ կանխիկ վճարելի. տպուած թերթերն առանձին առանձին կուղարկուին իւրաքանչիւր բաժանորդագրաց։ Այն անձինք՝ որք 12 օրինակէ աւելի կառնուն մի անգամով, և կամ դպրոցներ՝ որք կուզեն իրենց համար դանազան օրինակք՝ նոցա յատուկ և զգալի զեղչ կը շնորհուի։ Բաժանորդագրութեան գրուիլ ցանկացողք դիմեն հետևեալ հասցէիս.

Direction de L'imprimerie Arménienne Venise, St. Lazare. 1—3

# ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ „ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գօլօվինսկի պրօսպէկտի վրա։ Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կոպէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում։ Կերակուրները թարմ և համով։ 3—36

Ներկայ թուականի սեպտեմբերի 1-ից սկսեալ, մի ուսեալ հայ ընտանիք Թիֆլիսում ընդունում է **ԳԻՇԵՐՕԹԻԿ** աշակերտներ, որոնք կարող են բացի ռուսերէնից նաև գերմաներէն և ֆրանսերէն լեզուների գործնական վարժութիւններ ունենալ։ Յանկացողները թող դիմեն „Մշակի“ լրագրի խմբագրատունը։ 4—12 (Ե. շ.)

Բժշկականութեան մի ուսանող ՊԱՐԻԶՈՒՄ պատրաստ է հարկ եղած դիւրութիւններն ընծայել այն ամեն հիւանդներին, որոնք Պարիզ են գալիս իրանց յաւերը դարմանելու, ցոյց տալով նրանց յարմարագոյն հիւանդանոցներ և ամենայայտնի բժիշկների անունների վրա մատնացոյց անելով, մի և նոյն ժամանակ կատարելով և թարգմանի պաշտօնը։

Հասցէն իմանալու համար դիմել „Մշակի“ խմբագրութեանը։ 5—6

Կորցրել եմ մի քանի վկայականներ՝ այն է չորրորդ ատիճանի վկայական և այլն, որոնք կրում են ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐՕՎ աղգանունը. խնդրում եմ գտնողներին հասցնել Հալաբարի Էջմիածնեցւոց եկեղեցու քահանայ տէր-Բարսեղին։ 3—3

# Ա. ՌԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ՌԱԼԼԷ և ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻ

# ՄԱԽՄՈՒՐԻ ՊՈՒԴՐ

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ԾԱՂԿԱՀԻՒԹ ՍԱՊՕՆ

# ՁՈՒԻ ՍԱՊՕՆ

ՄԱՔՐՎԱԾ ԾԱՂԿԱՀԻՒԹ ՕԴԿՕԼՕՆ.

Ծախվում է ռուսաց կայսրութեան ըոլոր քաղաքներում։ ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏ ուղարկվում է ձրիապէս։ 3—5 (10—25)

1892-ին յունվարից լոյս կը տեսնէ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ պ. Մ. Բարխուդարեանի տպարանից.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ.

Բաժանորդագինն է երկու հատորին միասին 2 ռուբլի, իսկ իւրաքանչիւր հատոր գինն է 1 ռ. 50 կ.։

Հրատարակիչ՝ Յովհաննէս ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ։ 2—5 (շ.)

# ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Նորին գերազանցութեան կովկասեան ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի կարգադրութեամբ յուլիս ամսի վեցից վերափոխվում է հինգդասարանական ուսումնարանի պետական գիմնազիայի և բէալական ուսումնարանի ծրագրով։

Պանսիոնում կաւանդվին՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, խմբական երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն։

Պանսիոնում պատրաստվողները կարող են մտնել գիմնազիայի, բէալական ուսումնարանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասատուն. նոյնպէս զէմմէմէրնի, տեխնիկական և այլ միջնակարգ ուսումնարաններում։

Աշակերտներ ընդունվում են թոշնակաւորներ, կիսաթոշակաւորներ և երթևեկներ։ Ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ից։

Հասցէն. Тифлисъ, Сололаки, Вельяминовская улица, домъ Геворкова, № 11. 4—10 (Շ)

„ՄՇԱԿԻ“ խմբագրատունը ծախվում է. „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ“ ЛЕКЦІЯ ЧИТАННАЯ НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКѢ, **ГРИГОРІЕМЪ АРЦРУНИ.** Переводъ А. Аракелянца, (Москва, 1880). —Цѣна 25 коп., съ пересылкою 30 к. (Почтовыми марками). 20—20

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի տարրական սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնօվի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Յովհանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 11—25 (Ե. Շ.)

# ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

որն երկու տարի դասատու է եղել Աստրախանի Հայոց Ծխական դպրոցում և ունի իրաւունք ուսուցչական 5-րդ դասակարգի, ցանկանում է ունենալ դասեր ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ։

Հասցէն. Астрахань, Вардану Шелковникову, Большія Исады, д. Мадатова № 33. у Биржы. 3—3


Дозволено цензурою, Тифлисъ, 9 Августа 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 63